ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/4.1-2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 16-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաջյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի մարտի 31-ին կայացած նիստի N3/4.1-2-25 արձանագրությամբ՝ **«Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ**-ի կողմից ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի տրամադրման, մասնավորապես՝ ծրագրի տևողության փոփոխության՝ սահմանելով 9 ամսվա փոխարեն 8 ամիս և համապատասխանաբար աշխատավարձի տողերում սահմանված գնառաջարկի (միավորի արժեք, պահանջվող գումար) նվազեցման վերաբերյալ:

Նշվեց, որ

Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ **«Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ն**, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը՝ ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի տրամադրման, մասնավորապես՝ ծրագրի տևողության փոփոխության՝ սահմանելով 9 ամսվա փոխարեն 8 ամիս և համապատասխանաբար աշխատավարձի տողերում սահմանված գնառաջարկի (միավորի արժեք, պահանջվող գումար) նվազեցման վերաբերյալ, մրցութային հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Կայացավ քննարկում, որի արդյունքում Հանձնաժողովի անդամները, ուսումնասիրելով կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվը, հայտնեցին դիրքորոշում, որ կազմակերպությունից պահանջված փաստաթղթերը ներկայացվել են պատշաճ և ժամանակին:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ի** հետ՝ 3.460.000 (երեք միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____